№ 91 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11 **1894** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11 № 91

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Թիֆլիսի նահանգի պետական կալուածների կառավարիչ հանգուցեալ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԽԱՏԻՍԵԱՆԻ

պաշտօնակիցները խնդրում են հանգուցեալի յիշատակը յարգողներին ներկայ լինել հոգեհանգստին, որ պէտք է կատարվի կիրակի, օգոստոսի 14-ին, առաւօտեան ժամը 11-ին, Քամոյեանց եկեղեցում. 1—2

ԵՂԲԱՐՔ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆՑՆԵՐԻ ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ՅԱՅՏՆԵԼՈՎ

ՍՄԲԱՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Սալմաստում, յուլիսի 24-ին, խնդրում է հանգուցեալի ազգականներին և ծանօթներին ներկայ լինել հոգեհանգստին, որ լինելու է շաբաթ օրը, օգոստոսի 13-ին, Մէջղանի սուրբ Գէորգ եկեղեցում, առաւօտեան ժամը 11-ին. 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր կանոնադրութիւն պարսկահայերի համար.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ գաղթականները. Սովեալների օգտին. Նոր մանկավարժական թերթ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անարխիստների դէմ բիւր. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Աւազակը.

ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ

Պարսկաստանի հայոց հաստատութիւնները մինչև այժմ չունեն որ և է որոշ, հաստատ և մշտական կանոնադրութիւն, որով այդ հաստատութիւնները կարողանային ղեկավարվել իրանց գործունէութեան մէջ: Բոլոր ազգային հաստատութիւնների և գործերի գլխաւոր ղեկավարը, կարդադրիչը թեմական առաջնորդն է, որը թէև իրրև ժանդակ մարմին ունի և հոգաբարձական ժողովներ, բայց նոյն իսկ այդ հոգաբարձութիւնները ղեկավարվում են թեմական առաջնորդի ցուցմունքով և հրահանգներով: Փոխվում է առաջնորդը, փոխվում են և այդ հրահանգները, փոխվում է և եկեղեցական-ազգային գործերի վարչութեան եղանակը. դրանից առաջանում է շփոթութիւն, կամայականութիւն և զեղծում, քանի որ չը կայ որոշ կարգ, իրաւասութեան որոշ սահման: Վաղուց զգացվում էր կարևորութիւն վերացնելու այդ չարիքը, իսկ վերացնելու միակ միջոցը՝ որոշ, հաստատ, մշտական կանոնադրութիւն ունենալն է ազգային և եկեղեցական հաստատութիւնների կանոնաւոր վարչութեան և կառավարութեան համար:

Եւ ահա թէհրանի Ազգային ուսումնասիրաց ընկերութիւնը, նախաձեռնող հանդիսանալով, դիմել է Վեհափառ Կաթողիկոսին և խնդրել է տալ մի կանոնադրութիւն, որով որոշված լինէին թէ առաջնորդի, թէ հոգաբարձութիւնների և թէ այլ ազգային գործիչ մարմինների իրաւասութեան սահմանները: Իրրև պատասխան այդ դիմումի, Վեհափառը, կրկնելով այն ճշմարտութիւնը, որ „ամեն գործերի և հաստատութիւնների մէջ աջողութեան և առաջադիմութեան հիմնական պայմանը համարվում է կարգ ու կանոնը“, խոստանում է շուտով ուղարկել կանոնների հրահանգ:

Հաղորդելով այդ ուրախալի լուրը, „Շաւիղը“ յոյս է տածում, որ ապագայ կանոնադրութիւնը կազմված կը լինի բաւական բազմակողմանի և շրջանկատ կերպով, որպէս զի միանգամ ընդ միշտ ապահովվի հաստատութիւնների կանոնաւոր վարչութիւնը:

Մենք կարծում ենք սակայն, որ դժուար թէ այդ յոյսը իրականանայ, եթէ կանոնադրութիւնը խմբագրվի էջմիածնում և ուղարկվի Պարսկաստան ի գործադրութիւն:

Գովելի է էջմիածնի դիտաւորութիւնը, որ ձգտում է վերջ դնել վերջապէս Պարսկաստանի ազգային-եկեղեցական գործերի վերաբերմամբ կատարվող կամայականութիւններին և զեղծումներին, սահման դնել թեմական առաջնորդների կամայական գործողութիւններին և բոլոր ազգային հաստատութիւնների գործունէութիւնը կանոնաւորել ենթարկել: Սակայն ամեն մի կանոնադրութիւն կարող է արմատ ունենալ մի ժողովրդի մէջ միայն այն ժամանակ, երբ իր ազբիւրը վեր է առել նոյն այդ ժողովրդից, երբ այդ կանոնադրութիւնը արդիւնք է այն պայմանների ուսումնասիրութեան, որոնց մէջ գտնվում է այդ ժողովուրդը, և կարող է դեռ չը գործադրված ցամաքել, եթէ նա արդիւնք է կաբինէտային աշխատանքի:

Պարսկաստանում հայ ժողովուրդը ենթակայ է բազմատեսակ պայմանների. նրա անտեսական, մտաւոր, քաղաքացիական վիճակը, նրա յարաբերութիւնը դէպի տիրող տարրը, նրա կուլտուրական մակերևոյթը, նրա աշխարհայեցողութիւնը, աւանդութիւնները—ահա պայմաններ, որոնց պէտք է լուրջ կերպով ուսումնասիրել, այդ ժողովրդին կանոն տալուց առաջ: Ապագայ կանոնադրութիւնը միայն այն ժամանակ գործնական կը լինի, լաւ արդիւնք կարտադրի, երբ կը կազմվի, կը խմբագրվի ոչ թէ էջմիածնում, այլ նոյն իսկ Պարսկաստանի հայ ժողովրդի անմիջական մասնակցութեամբ, տեղնուտեղը, ձեռնհաս և ընդունակ անձերի աջակցութեամբ:

Ուստի, մեր կարծիքով, ամենագործնական միջոցն է՝ առաջարկել պարսկահայերի երկու թեմական առաջնորդներին, որ նրանք հայ ազգաբնակութեան պատգամաւորների և ներկայացուցիչների մասնակցութեամբ մի յանձնաժողով կազմեն, որին և յանձնեն նոր կանոնադրութեան խմբագրութիւնը և մշակումը, և ապա այդ կանոնադրութիւնը առաջարկեն էջմիածնի հոգևոր իշխանութեան հաստատութեան:

Միայն այդ ձևով կազմված կանոնադրութիւնը կը համապատասխանէ տեղական կեանքի պահանջներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Արդէն յայտնի է, որ թիւրքահայ գաղթականները արդէն սկսեցին ցրվել Կարսի շրջանից դէպի հայաբնակ գանագան կողմեր, փոխանակ աշխատելու վերադառնալ իրանց հայրենիքը: Զարաչար կը սխալվի հայ գաղթականը, եթէ յոյս ունենայ, որ առաջիկայ ձմեռն ևս հայ գիւղացին կարող կը լինի կերակրել սպառող, բայց ոչ արդիւնաբերող ստուարաթիւ մարդկանց խմբերը: Հակառակ իր հիւրասիրութեան, հակառակ այն եղբայրական յաւակցութեան, որ այսօր ամենուրեք գտնված հայը զգում է դէպի իր բաղդազուրկ, թշուառ ազգակիցը, ռուսահայ գիւղացին արդէն սպառած լինելով իր ունեցածը, կամայակամայ պէտք է ստիպվի իր տնից հեռացնելու հայ գաղթականին, որը կենթարկվի այդպիսով սովամահ լինելու վտանգին: Մարգարէ լինելու կարիք չը կայ այս անհրաժեշտ գալիքը դուշակելու համար, և ուրեմն, գաղթականները օր առաջ պէտք է վերադառնան իրանց երկիրը:

Դրա հետ միասին տեղացի հայ ազգաբնակութիւնը նկատում է գաղթականների մէջ մի քանի ներքին անհամակրելի յատկութիւններ՝ մուրացկանութիւն, ագահութիւն, ստախօսութիւն, ստորաքարշութիւն, անպատկառութիւն, որոնք երբեմն երբեմն թուլացնում են տեղացիների ցաւակցութեան զգացմունքը դէպի եկող գաղթականները:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԻԱԶԱԿԸ

(Ձգրիտ անցք ռուս-թիւրքական պատերազմից)

I

Ռուսաց յաղթական զօրքը արդէն գրաւել էր Արդահանը. այդ առաջին բերդաքաղաքը անձնատուր եղաւ 1877 թուի մայիսի 5-ին, որով բացվեց մի նոր ճանապարհ դէպի Բաթում: Ռուսաց զօրքի մի այլ բանակ պաշարել էր Կարսի անառիկ բերդը, ուր Մուխտար-փաշան փակված էր, ինչպէս ճնճղուկը վանդակի մէջ: Յաղթական զօրքի մի փոքրիկ մասն էլ, գնդապետ Կոմարովի առաջնորդութեամբ, խաղում էր առաջ՝ դէպի Արդանուչ ու Արդուին, և արդէն անցել էր «Եալանուս-դամի» բարձրութիւնները:

Սարսափը և երկիւղը տիրած էր մահմէտական տարրին: Ոչ մի կերպ չը կարողանալով դիմադրել զօրեղ թշնամուն, նրանք իրանց վրէժը թափում էին խեղճ հայերի—այդ միշտ աշխատասէր, լուռ, սարկութեան հասած խոնարհ հպատակների գլխին:

Այն միտքը, թէ մոսկովը—ռուսաց զօրքը մօտ է Արդանուչին, արդէն կատաղութեան էր հասցրել ոչ միայն Արդանուչի մահմէտականներին, այլ նոյն իսկ թափառական մոլլաներին ու դերվիշներին, այդ ֆանատիկոս մահմէտական կրօնաւորներին, որոնց համար այն ամենը, որ մահմէտական չէ, մահվան արժանի է:

Օրը շաբաթ էր. գիշեր. երկնակամարը ծածկված էր մառայ ամպերով, կարծես պատրաստվում էր միանգամից հեղեղել, ոչնչացնել Արդանուչը. ամպերի գոռգոռոցը, կայծակը և քամին, խառնված միմեանց հետ՝ սոսկում էին ազդում: Հայերի տներում կրակ չէր երևում. փողոցները դատարկ էին, որպէս անապատ: Շները, որ այնքան շատ են տաճկական քաղաքներում, նրանք ևս լուռ էին և չէին երևում:

Այդ ժամանակ հայ-կաթոլիկների եկեղեցու մօտ գտնված տան դուռը բացվեց և չէմքի վրա երևաց մի բարձրահասակ, մօտ վաթսուն տարեկան ծերունի: Նա այնքան առողջ էր և ժիր, որ կարելի էր կարծել, թէ 40—45 տարեկան է. երկար վերարկուն ցոյց էր տալիս, որ նա հոգևորական է: Նա տեղական հայ-կաթոլիկների վարդապետ տէր-Անտոնն էր:

Զը նայելով ընութեան կատաղութեան, նա արագ քայլերով անցաւ մի քանի նեղ ու ծուռ փողոցներ և վերջապէս մօտեցաւ մի երկյարկանի տան, որի դրան մօտ կանգնած էր մի թուրք ոտից գլուխ զինաւորված:

—Ցանն է բէկը, հարցրեց վարդապետը:

—Ցանն է, փափաղ էֆէնդի, եղաւ պատասխանը, բայց ինչը քեզ բերեց այս սարսափելի եղանակին այստեղ, ուզեցրեց թուրքը:

—Իմ մասին յայտնիր բէկին. հարկաւոր գործ ունեմ:

—Այս րոպէին, ասեց թուրքը, և հեռացաւ:

Անտոն վարդապետը մեծ պատիւ և յարգանք էր վայելում թիւրքերի կողմից, որպէս հասկացող, խելացի և լեզուագէտ վարդապետ:

Մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ թուրքը և հրաւիրեց վարդապետին բէկի մօտ:

Սենեակը, ուր մտաւ վարդապետը, մեծ չէր և ոչ մի բանով չէր զանազանվում գիւղական սենեակներից. միակ զարդը, դա մի թանկագին գորգ էր, սփռված յատակի վրա պատի մօտ, որի վրա նստած՝ դալիան էր ծխում մի վերին աստիճանի գեղեցիկ աղամարդ, մօտաւորապէս 40 տարեկան. նրա լայն ճակատը և մեծ, սև աչքերի պարզ հայեացքը վերին աստիճանի զրաւիչ էին. թէև այդ աչքերը երբեմն փայլում էին կատաղութեամբ, բայց այդ դրութեան մէջ էլ նրանք այնքան սարսափելի չէին, որքան դա նկատելի է մի հարստահարողի, բռնակալի, աւազակի աչքերում...

Տեսնելով վարդապետին, այդ մարդը ժպտաց բարի ժպիտով և հրաւիրեց նստելու:

—Բարով, փափաղ էֆէնդի, բարով. ինչ կայ, ինչը քեզ այս րոպէիս բերեց ինձ մօտ, ինչու այդքան տխուր ես և յուսահատ:

—Է՛հ, բէկ, դարձաւ վարդապետը նրան, կեանքը ինձ համար այս աշխարհում եղել է միշտ տանջանքների մի երկար շարք, երբէք նա ինձ չէ ժպտացել. կարծես ճակատագիրը ծնված օրիցս որոշել է ինձ համար միայն նեղութիւն և տանջանք:

—Մի այդքան յուսահատվի, փափաղ էֆէնդի, շատ անգամ մարդիկ իրանք իրանց ձեռքով ստեղծում են նեղութիւն և տանջանք և ապա այդ ամենը կապում են բաղդի և Աստուծու չինքին: Վեր առ հէնց այս մեր պատերազմը մոսկովների հետ. միթէ մենք թիւրքերս չէինք մեղաւոր այդքան մարդկանց արիւն թափելու համար. միթէ մենք մեր ձեռքով չը պատրաստեցինք այս ամօթալի պարտութիւնը: Պատերազմը սկսված օրից մինչև այսօր ոչ մի ճակատամարտում մենք չը կարողացանք պահպանել օսմանեան զէնքի պատիւը և թշնամին հետզհետէ գրաւում է մեր հայրենիքը... բայց մենք փոխանակ մեզ վրա բարկանալու, փոխանակ դրանց պատճառը մեղանում որոնելու, ուրիշներին ենք մեղադրում և նրանցից ենք ուզում վրէժ լուծել:

Այդ խօսքերն ասելիս տխրութեան թախիծը պատեց նրա լայն ճակատը, կարծես այդ մարդը ամբողջապէս նախատեսնում էր պատերազմի վատ հետևանքը թիւրքերի համար:

—Ես հաւատացած եմ, փափաղ էֆէնդի, շարունակեց նա, որ քանի մի ժամանակից յետոյ մեր առաջնակարգ բերդերը բոլորը ընկնելու են մեր թշնամու առջև, և մենք ստիպված պիտի լինենք ամօթալի պայմաններով հաշտութիւն կապել: Եւ այդ բոլորի պատճառը մենք ենք, մենք թուրքերս, ոչ ժողովուրդը, այլ նրա կառավարիչները, սկսած փաղիշահից մինչև յետին գայմագամը... սա ճշմարտութիւն է, անհերքելի ճշմարտութիւն: Տեսնում էք, թշնամին մեզ մօտ է, մի երկու օր ևս՝ և Արդանուչը կը խլվի մեր ձեռքից: Ես հաւատացած եմ դրանում: Բայց ինչով են պարապած մեր կառավարիչները... այդ միայն Ալլահը գիտէ:

Պէտք է ասենք, որ դա արդար վերաբերմունք չէ տեղացիների կողմից դէպի գաղթականները։ Այդ մի քանի անհամակրելի յատկութիւնների համար, որ շատերը նկատում են գաղթականների մէջ, գաղթականներին չը պէտք է հալածել և մերժել, այլ միայն ցաւել։ Եւ ահա ինչու։

Գաղթականները գտնվել են Թիւրքիայի զարհուրելի տակ. կեանքի և գոյքի անապահովութիւնը, հալածանքը, ճնշումը ստիպել են նրան կեղծաւորվել, չողոքորթել, ստել, զրկել են նրան ինքնաճանաչութիւնից։ Անապահով ներկան ստիպել է նրան բօշայութիւն անել։ Սովի ժամանակ, ասում են, որ մարդիկ անկուշտ են դառնում, որովհետև վստահ չեն թէ վաղը ևս առատութեամբ հաց կը գտնեն. ճիշդ այդպէս և գաղթականները աշխատում են հնարաւորութեան չափ շատ բան ժողովել անորոշ վաղվան համար։

Տգիտութիւնն ևս իր սոսկալի ճիրանները տարածել է հայ գաղթականի հոգու մէջ. երկրի անապահով վիճակը, կրթական հաստատութիւնների բացակայութիւնը, մի պատառ հացի, օրապահիկի՝ կողոպտիչ ճիւաղների ձեռքից պահպանելու յարատև ճիգը՝ խոր տգիտութեան մէջ թաղել են հայ գաղթականին։ Եւ եթէ գաղթականը տգէտ չը լինէր, եթէ նա կատարելապէս ըմբռնէր այն սարսափելի վիճակը, որի մէջ նա գտնվում է այսօր, չէ՞ որ դարդամահ կը լինէր։

Զրկված հայրենիքից, տուն ու տեղից, ապրուստի միջոցից, չունենալով մի տեղ, որտեղ կարողանար հանգչեցնել իր գլուխը, բռնած իր ճժերի ու բժերի ձեռքից, շատ անգամ ադամային մերկութիւնը ծածկելու փալասին ևս կարօտ, բոբիկ ոտքերով, արեգակի կիզիչ ճառագայթների տակ, ձմեռվայ չնչասպառ սառնամանիքի միջոցին անցնում է գաղթականը գիւղից գիւղ և քաղաքից քաղաք մի պատառ չոր հացի համար։

Փոքրահասակ մանուկը, որի համար նոր է բացվում կեանքի արշալոյսը, փոխանակ ուրախ, զուարթ խաղալու, վազվզելու՝ իր չորս կողմը տեսնում է միմիայն մթագնած դէմքեր, նկատում է իր մերձաւորների աչքերում արտասուք և անհոգ մանկութեան փոխարէն վրա է հասնում տարաժամ լրջութիւնը. նա, այդ մանուկը միջոց չունի զուարճանալու. նրան սովորեցրել են մուրալ, և երբ դուք տեսնում էք նրա սևորակ աչքերում երևացող հարցական արտայայտութիւնը, երբ նկատում էք նրա անմեղ դէմքը, դէպի ձեզ պարզած բաղկիկը, ձեր ամբողջ էութիւնը լցվում է արդար դայրոյթով այն մարդկանց դէմ, որոնք բնութիւնից առատօրէն օժտված երկրում բնակվող աշխատասէր հային ստիպել են երկրից երկիր թափառել և երկրագործական ազնիւ աշխատանքին սովոր հուժկու բազուկը, կերակրիչ զութանի մաճը բռնող աջը պարզել մի գրօշ, մի կոպէկ ողորմութիւն ստանալու համար սրտացաւ եղբօրից, քրոջից... Եւ մուրացկանութեան ընտելանում է դեռաբոյս սերունդը, փոքրութիւնից արդէն սովորում է բօշայութեան...

Տեսել էք արդեօք դուք Կարսի փողոցներում, զինեանների, զօրանոցների առաջ թափառող մի հայ նորահաս կոյսին, որին հանդիպում են հարբածների և կոշտ զինուորների լկտի հայհոյանքները,—կոյսը, որը ստիպված է հաց մուրալ գուցէ իրանից փոքր եղբայրներին կերակրելու համար։ Եւ զարմանալի կը լինի միթէ, որ այդ՝ դեռ ևս մարդկանց չարամտութեանը անդիտակ էակը, մի օր չեղվի բարոյականութեան ճանապարհից... Տասնեակ հազար գաղթականներ այսօր լցրել են մեր երկիրը և ցրտի ու տապի տակալով, խոնաւ գետնի վրա պառկելով, լոկ, ցամաք հացն անդամ ահագին դժուարութեամբ ձեռք բերելով և օրից օր գրեթէ քաղցած անցկացնելով, ողորմելիները քարշ են տալիս իրանց թշուառ գոյութիւնը։ Հնարաւոր է, արդեօք, որ այսպիսի պայմաններում ծնվող ու սնվող սերունդը քաջառողջ լինի.—ի հարկէ, ոչ. այսպիսի պայմաններում սերունդը կը փչանայ, կը մանրանայ, կը այլասերվի։

Այս բոլորից յետոյ մենք իրաւունք չունենք տաճկական բարբարոս երկրի գարշահոտ, սպանիչ մթնոլորդի մէջ ծնված ու շնչած մարդուց առողջ, նորմալ օրգանիզմ պահանջել։ Գաղթականների մէջ նկատվող բարոյական թերութիւնները, որ, անկասկած, պատուաստվել են հայ մարմնի վրա ապականիչ ազդեցութեան շնորհիւ, մարդկային արժանիքի, ինքնաճանաչութեան պակասութիւնը, որ մենք նկատում ենք նրանց մէջ, մեր կարծիքով, չը պէտք է ծառայէ որպէս առիթ նրանց արհամարհելու, մեր օգնութիւնը նրանց մերժելու, այլ, ընդհակառակն, պէտք է աւելի ևս կարեկցութիւն շարժէ դէպի մեր դժբաղդ եղբայրակիցները, որոնք բարբարոսական հալածանքի շնորհիւ, նիւթական բարեկեցութիւնը կորցնելուց զատ՝ մարդկային արժանիքների մի մասը ևս կորցրել են, հետևապէս և կրկնապատիկ դժբաղդ են։

Մենք նրանց վրա պէտք է նայենք որպէս ուրիշների ախտաւէտ մարմնիցը վարակված հիւանդների վրա, որոնք կարօտ են ամենայն գութի ու խնամքի։ Նոյն իսկ այդ հանգամանքը պէտք է աւելի ևս ատելութիւն ծագեցնէ դէպի այն տարրը, որի թունաւոր շնչից մարդկութեան մի մասը դարեր ամբողջ կանգ է առել իր զարգացման մէջ և որը մերժում է թոյլ տալ, որ մշակը ապրի իր աշխատութեան արդիւնքով, որ նա մարդկային անբռնաբարելի, տարրական իրաւունքն ունենայ կեանքի, կայքի, պատի ապահովութիւն պահանջելու։

***

ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք Թիւրքաց Հայաստանի, Երևանի ու Կարսի նահանգների սովեալների օգտին.

1) Լեվաշիից, Դաղեստան, բժիշկ Ղուկաս Մատուսեանի միջոցով 25 ռուբլի, որ հանգանակված է մի խումբ անձանց մէջ։ Նուիրատուութեանը մասնակցել են ռուս, հայ, վրացի և թուրք։

2) Դուբաց կոյ գիւղից, Գէորգ Սահակեանի միջոցով 7 ռուբլի, հանգանակված մի քանի անձանց մէջ։

3) Զաքիշլարից, Արշակ Բժշկեանի միջոցով հանգանակված 22 ռուբլի։

Ուրեմն նախկին 870 ռուբլի 73 կոպէկի հետ, այժմ ունենք ընդամենը 924 ռուբլի 73 կոպէկ։

Այդ գումարից ուղարկեցինք.

1) Հայոց Բարեգործական ընկերութեան Թիֆլիսի խորհրդին 100 ռուբլի։

2) Կարս, Բարեգործական ընկերութեան ճիւղին, գաղթականներին հայրենիք վերադարձնելու համար 100 ռուբլի։

Մեզ մօտ մնում է 724 ռ. 73 կ։

Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 8390 ռ. 55 կ.։

Ուղարկել ենք 7666 ռուբլի։

ՆՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ

—

Կ. Պոլսի նախկին «Մասիս» շաբաթաթերթը այժմ վերածվել է մանկավարժական թերթի և հրատարակվում է 15 օրը մի անգամ, իբրև պաշտօնական օրգան ազգային կենտրոնական վարչութեան Ուսումնական խորհրդի, մի առանձին խմբագրական մասնաժողովի հսկողութեամբ։

Նոր թերթը, որ սկսել է հրատարակվել մայիսից, սահմանված է զլխաւորապէս «նախնական և երկրորդական կրթութեան խնդիրներով զբաղվելու», ինչպէս յայտնված է պաշտօնական ծանուցման մէջ։ Մեր ստացած 4 թերթերը արդէն բաւական որոշ գաղափար են տալիս այդ օրգանի ուղղութեան մասին։ Նա հանդիսանում է զուտ մանկավարժական—կրթական թերթ, հրատարակելով բուն մանկավարժական, հոգեբանական, դպրոցական առողջապահութեան, մեթոդիկայի վերաբերեալ յօդուածներ, ինչպէս և փորձնական դասերի օրինակներ։ Պաշտօնական մասը պարունակում է ուսումնական խորհրդի որոշումները։

Եթէ այդ ուղղութեամբ շարունակի ընթանալ, «Մասիսը կարող է բաւական լուրջ օրգան դառնալ և կրթութեան գործին, որ այնքան խղճուկ վիճակի մէջ է Թիւրքիայում, մեծապէս նպաստել։

Սակայն նոր հանդէսը մի զլխաւոր պակասութիւն ունի. լեզուն պարզ չէ, համեմված է դրաբարի ձևերով և տեղ տեղ ճոռոմաբան։ Ոչ մի գործ այնքան պարզութիւն չէ սիրում, ինչպէս դաստիարակութեան և կրթութեան գործը, և քանի որ թերթը սահմանված է ժողովրդական ուսուցիչների համար, որոնց մեծագոյն մասը շատ քիչ ծանօթութիւն ունի եւրոպական և մանաւանդ գերմանական մանկավարժութեան հետ, որի տարրերքը թերթը կամենում է ընդհանրացնել, ուստի ամենաապահով միջոցը—պարզ, հեշտ և դիւրահասկանալի լեզուն է և ոչ թէ ճարտասանական դարձուածները։

Թերթի տարեկան գինը 50 ղրուշ է կամ 4 ր։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Խնդրում ենք «Մշակի» այն բաժանորդներին, որոնք մինչև այժմ չեն վճարել բաժանորդագինը, շտապեն անմիջապէս ուղարկել իրանց վրա մնացած ապառիկները։

—

Մեզ հաղորդում են, որ մի քանի երիտասարդներ մտադրվել են առանձին գրքերով լոյս ընծայել վրաց գրականութեան մէջ յայտնի հեղինակութիւնների հայերէն թարգմանութիւնը։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց Պոլսում տպված մի նոր գիրք «Մարդ ըլլալու միջոցը» վերնագրով, որ յօրինել է Ա. Կ. Սէքլէմեան, հետևելով անգլիացի գրող Ուիլըմ Թէյլրին։ Ինչպէս բացատրված է առաջաբանի մէջ, գրքի նպատակն է առաջնորդել անփորձ երիտասարդներին կեանքի դժուար ճանապարհի մէջ։ Այդ նպատակին հասնելու համար, հեղինակը երկար ու բարակ խորհրդածութիւններ է անում, խրատներ է տալիս, երբեմն երբեմն միայն մի որ և է յայտնի անձի կենսագրութիւնից մանր օրինակներ բերելով։ Մեզ թվում է, որ հեղինակը աւելի հասած կը լինէր իր նպատակին, եթէ այդ յայտնի անձերի կենսագրութիւնները պատմէր, այլապէս դժուար թէ Պոլսի հայ երիտասարդները կարողանան «մարդ ըլլալ» և «կեանքի մէջ յաջողիլ» Սէքլէմեանի վերացական խրատներով։ Գրքի գինն է 8 ղրուշ կամ 65 կոպէկ։

—

Այս օրերս Պետերբուրգում ժողովրդական լուսաւորութեան մինիստր Դելիանովին ներկայացան հրէաների մի քանի ներկայացուցիչներ և խնդրեցին՝ 1) աւելացնել հրէաների սկզբնական դպրոցների թիւը, 2) հեշտացնել հրէաների մուտքը ընդհանուր և պրոֆեսիոնալ դպրոցներում և 3) հիմնել մի մասնագիտական դպրոց՝ զարգացած կրօնուսոյցներ պատրաստելու համար։ «Восходъ» լրագիրը աւելացնում է, որ կոմս Դելիանով երկար խօսակցութիւն է ունեցել նրանց հետ և յայտնել է, որ նրանց այդ դեկուցագիրը անձամբ կը քննէ և անձամբ հարկաւոր կարգադրութիւնները կանէ։ Այժմ լրագիրները

բէկը լռեց. անցաւ բաւական ժամանակ, վարդապետը չը գիտէր ինչպէս վերջ տար այդ անտանելի լռութեանը, իսկ բէկը կարծես մոռացել էր նրա ներկայութիւնը. յանկարծ նա սթափվեց իրան պաշարող դառն մտքերից։

—Բայց դու, փափաղ էֆէնդի, դարձաւ նա վարդապետին, չասացիր ինձ քո այցելութեան պատճառը. ուղիղը ասա, ինչը քեզ բերեց այստեղ, թէև մասամբ դուշակում եմ. այն լուրերը, որ անա քանի օր է շրջում են քաղաքում—ուղիղ չէ՞։

—Ի՞նչ մեղքս պահեմ, այո, այդ լուրերն են այցելութեանս պատճառը. մենք, որպէս հովիւ մեր հօտին, պարտական ենք նրա ցաւին ցաւակից լինելու և ոչինչ չը խնայելու նրանց վտանգից ազատելու համար, եթէ իսկապէս ուղիղ են այդ լուրերը... Ես աղաչում եմ, բէկ, արէք ինձ հետ ինչ որ կամենաք. կեանքս ձերն է, բայց, ի սէր Աստուծոյ, խնայեցէք իմ հօտին. որ մեղքի համար էք նրան դատապարտել մահվան. միթէ՞ հայերս ենք մնդաւոր օսմանեան զէնքի անաջողութեան։ Ի՞նչ սարսափելի վճիռ է, որ տուել էք. կոտորել բոլոր հայերին... Ասացէք, ի սէր Աստուծոյ, ինչով են մեղաւոր հայերը. երբ նրանք կառավարութեան պահանջները սրբութեամբ չը կատարեցին. երբ նրանք անհաւատարիմ գտնվեցին սուլթանների դահին. ինչ է նրանց մեղքը...

—Նրանց մեղքը... կրկնեց բէկը, նրանց մեղքը այն է, որ հայեր են... որ կրօնակից են մեր թշնամուն։ Միթէ՞ դա լաւ պատճառ չէ անմեղ արիւն թափելու. մի բանով պէտք է բարձրագոյն կառավարութեան առջև արդարանալ մեր կրած պարտութեան համար. բացի հայերից ով կարող է լաւ պատճառ համարվել. թողած արտաքին թշնամուն, մենք պատրաստվում ենք կոտորելու մեր խաղաղ հպատակներին... այդպէս են պահանջում փաշան ու մոլլաները, այդ է հրամայված և ինձ. դուք բոլորդ լրտեսներ էք, որ քանդում էք մեր տունը, դուք մեր գաղտնիքը հաղորդում էք թշնամուն, այս է ձեր մեղքը և պատերազմի ժամանակ այդպիսիների վարձը—մահն է...

—Եւ դուք հաւատում էք այդպիսի զրպարտութիւններին, բէկ, հարցրեց վարդապետը, արտասուքը աչքերին։

—Ի՞նչ վերաբերում է ինձ, դա ուրիշ խնդիր է, բայց մեծ մասը հաւատացած և համոզված են։

—Ուրեմն պէտք է բոլորին կոտորել, կը նշանակէ դա արդէն վճռված է։

—Այո՛, այդպէս է վճռել մեր փաշան, այդ փբթած և նեխած ծերունին, որը իր նապատակի քաջութիւնը ուզում է փորձել մրջունների վրա...

—Բայց միթէ չէ կարելի մեղմացնել փաշայի հրամանը. բէկ, ամեն բան պատրաստ եմ անելու, միայն խնայեցէք ժողովրդիս կեանքը. եթէ արիւն է հարկաւոր, ահա իմ կեանքը, հրամայեցէք թող սպանեն ինձ, բայց կոտորել բոլորին... Աստուած իմ, դա սարսափելի վճիռ է...

Եւ հազիւ վերջացրած իր խօսքը, վարդապետը չոքեց բէկի առաջ և փարեց նրա ոտներին։

—Խնայեցէք բէկ, խնայեցէք անմեղ ժողովրդին... եթէ դուք կամենաք, կարող էք այդ վտանգի առաջն առնել. դուք ինքներդ լաւ գիտէք, որ մենք մեղաւոր չենք, որ հայերը միշտ հաւատարիմ են եղել...

—Վեր կաց, փափաղ էֆէնդի, մի ատրայնի քեզ. եթէ ինձանից կախում ունենար այդ վճիռը, ես դիտէի որոնց պէտք է կոտորել. բայց դա ինձանից չէ կախված, չէ։ Այնու ամենայնիւ, ես երդվել եմ խանգարել փաշայի և մոլլաների այդ մտադրութիւնը, և իմացիր, կը հասնեմ նպատակիս, անհոգ եղիր... Ես չեմ լինի Էմրուլայ, թող հարամ լինի ինձ իմ մոր կաթը, եթէ նրանք կարողանան մի հայի վնասել... փափաղ էֆէնդի, դու ճանաչում ես ինձ ու գիտես, որ խօսքս խօսք է. վերկաց գնա և հանգստացրու հայերին. վաղը ես կը նշանակեմ ձեր եկեղեցու դրան մօտ իմ մարդկերանցից 12 հոգի, որոնք կը պահպանեն եկեղեցու մուտքը թիւրք ամբոխից, այդ ես վճռեցի այն րօպէին, երբ փաշան տուեց իր հաճութիւնը մոլլաներին։ Եւ երբ մօտիկը առնէ Արդանուշը, ես իմ մարդկերանցով կը հեռանամ իմ ծննդավայրը։ Ես որպէս կամաւոր զինուոր հաւաքեցի իմ մարդկերանց ու հասայ այստեղ հայրենիքիս օգնութիւն անելու. ես կառավարութիւնից ոչ մի ակնկալութիւն չունեմ, ոչ էլ ռոճիկ եմ ստանում, այդ դու էլ գիտես, բայց ես հիասթափվեցի... չարժէ այդպիսի մարդկանց հետ գործ ունենալ, ինչպիսին է փաշան...

Վարդապետը բռնած Էմրուլայի ձեռքերը, կամենում էր համբուրել ի նշան շնորհակալութեան։

Այդ դուշակեց բէկը։

—Փափաղ էֆէնդի, ես սովոր չեմ այդպիսի բաների. չը նայելով որ ես յայտնի աւազակային խմբի հրամանատար եմ, չը նայելով, որ շատ մարդիկ ընկել են իմ և մերայնոց ձեռքից, բայց հաւատացիր, ինձ առաջնորդ է եղած միշտ ճշմարտութիւնը. անմեղը երբէք չէ տուժել ինձանից, այդ իմ կեանքի նշանաբանն է եղել։ Այժմ ես էլ թողնելու չեմ, որ անմեղ արիւն թափվի, եթէ դա մինչև անգամ իմ արիւնը պահանջելու լինի... Գնաս բարով, գնա, հանդիստ եղիր և հանգստացրու հայերին. քանի էմրուլան այստեղ է, ոչ ոք, հասկանում ես, փափաղ էֆէնդի, ոչ ոք չի համարձակվի ձեր մազին դիպչել...

Վարդապետը խորին շնորհակալութիւն յայտնելով դուրս եկաւ...

II.

Կիրակի առաւօտն էր. դեռ շատ վաղ փոքրիկ Արդանուշի քրիստոնեայ ժողովուրդը շտապում էր եկեղեցի. ամեն հասակի մարդիկ, երիտասարդ, ծեր, կանայք, օրիորդներ, երեխաներ, սարսափահար եղած այն երկիւղով, թէ չուտով թիւրք ամբոխը, միացած տեղական զօրքի հետ, կոտորելու է իրանց, և իրանք անզօր են դիմադրելու այդ արիւնռուշտ ամբոխին, դիմում էին Աստուծու տունը վերջին անգամ աղօթելու, որ գուցէ երկինքը այդ պատուհասը հեռացնէ իրանցից։

Փոքրիկ եկեղեցին լի է բազմութեամբ. սովորականից աւելի ջերմեռանդութիւն նկատվում էր ամենի երեսի վրա. խորին երկիւղածութեամբ աղօթում էին։ Դուրսը, եկեղեցու դրան մօտ, կանգնած էին 12 զինաւորված տաճիկներ, որոնց ներկայութիւնը աւելի սարսափ էր ազդում խեղճ աղօթողներին։ Ո՞վ կարող էր երաշխաւորել, որ

ը հաղորդում են, որ այդ զեկուցագիրը մինիստրութեան կողմից առնված է ի տեղեկութիւն։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ բնական դպրոցների դասաւանդութեան ձևի և պրոգրամայի մէջ լուրջ փոփոխութիւններ են արված։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի առաջնորդ Սուրէնեան եպիսկոպոսը դիմել է Էջմիածին խնդրելով, որ իրան թոյլ տրվի անկախ կերպով, առանց սինոդի միջամտութեան, ձեռնադրելու քահանաներ Թիֆլիսի թեմի համար։ Այդ լուրի հետ միասին մեզ հաղորդում են, որ Սուրէնեան եպիսկոպոսի խնդիրքը հաւանութիւն չէ գտել Էջմիածնում։

—

Լրագիրները հաղորդում են, որ պարսից Շահը հրաժարվել է այս տարի Եւրոպա ճանապարհորդելու մտադրութիւնից՝ Պարսկաստանի ֆինանսական նեղ դրութեան պատճառով։

—

Կիեվի քաղաքային դուման միջնորդել է կառավարութեան առջև, այդ քաղաքում մի նոր բարձրագոյն գիւղատնտեսական դպրոց հիմնելու համար։

—

Ֆինանսների մինիստրութեան մէջ, մայրաքաղաքի լրագիրների խօսքերով, աւարտված է այն նախագծի մշակումը, որ վերաբերում է ռուսաց արդիւնաբերութեան նմուշների համար թանգարաններ հիմնելուն արևմտեան Եւրոպայի և արևելեան պետութիւնների գլխաւոր քաղաքներում։ Այդ թանգարանները պէտք է շինվեն ֆրանսիական և գերմանական թանգարանների նման, որոնց թիւը արդէն 100-ի է հասել։ Առաջին թանգարանները կը բացվեն Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում և Թուրքիայում։

—

Մենք բոլորովին մոռացել էինք Քամոյեանց եկեղեցու նախկին երէցփոխ Գէորգ Աբիմանին, բայց «Արձագանքը» մեզ յիշեցրեց նրա երէցփոխական գործունէութիւնը մի անգին, բայց անմիտ առաջնորդողով։ Իբրև վարձատրութիւն «Արձագանքին», մենք կարձանագրենք ահա թէ ինչ։—Մեզ հաղորդում են, որ նախկին երէցփոխը, Գէորգ Աբիմեան, չը նայած որ աւելի քան մի տարի է թողել է երէցփոխութիւնը, մինչև այժմ չէ յանձնում այժմեան երէցփոխ պ. Մելիք-Ղարագեօզեանին շատ թղթեր և պաշտօնական գրութիւններ։ Մի քանի անգամ դիմել և յիշեցրել են Աբիմանին, որ յանձնի այդ թղթերը —բայց անօգուտ։ Զարմանալի չէ՞ միթէ։ Այդ մարդը տասն տարի երէցփոխ մնաց, ոչ մի անգամ հաշիւ չը տուեց, այժմ էլ երէցփոխութենից դուրս գալուց յետոյ, չէ յանձնում եկեղեցուն պատկանող պաշտօնական գանգան թղթեր։

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ հարց է յարուցված այն բանի մասին, որ ամեն տեղ ծննդավաճառային առևտուրը կիրակի օրվայ փոխանակ շաբաթ օրերը կատարվի։

—

«Нов. Время» լրագրին հաղորդում են, որ կին-բժիշկներից մինը միջնորդել է, որ իրան թոյլ տրվի բանալ Պետերբուրգում մի դեղատուն, ուր բոլոր ծառայողները և աշխատողները, նոյնպէս և կառավարիչները պէտք է բացառապէս կանայք լինեն։ Այդ դեղատան կից կը հիմնվեն իգական գործնական կուրսեր, ուր իգական սեռի անձինք կը կարողանան ուսումնասիրել գործնականապէս դեղագործութիւնը։

—

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրին, ինչպէս լսել է «Нов. Ообзр.» լրագիրը, Կովկաս գալու ժամանակ կուղեկցի նախկին լիազօր Տիխէև։ Մինիստրը դուրս կը գայ Պետերբուրգից օգոստոսի 12-ին։

—

ՕՐԴՈՒԲԱԹԻՑ մեզ գրում են. «Կարճեան գիւղի թալանելու մասին ահա էլի մի քանի մանրամասնութիւններ։ Աւազակների Արաքսով թէ այս և թէ այն կողմը անցնելը սահմանապահ զինուորները տեսել էին, բայց երկիւղից արդեօք չէին եղել։ Երէկ մի մարդու հետ այցելեցինք գիւղը և սրտաճմլիկ տեսարանի հանդիպեցինք. գիւղը թալանված, կանայք ու երեխաներ փախուստ տուած մերձակայ գիւղերը, մարդիկ յուսահատ և տխուր, իրանց անհեռատեսութեան պատճառով կրած ահագին վնասի համար։—Կարճեան գիւղի դիրքը անառիկ է, իսկ բնակիչները քաջ և անվեհեր, և եթէ չը չփոթվէին, լսէին մի երկու մարդկանց խորհրդին, անշուշտ բոլոր աւազակներին քարով ու փայտով կը կոտորէին։ Սահմանագծի դիմացի գիւղը, ուր ապաստարան է գտել Նաբին իր խմբով, Դուզալն է։ Դուզալի հետ մի քանի գիւղեր ևս պատկանում են պարսից կառավարութեան մէջ մեծ պաշտօն վարող մէկին, որին աջիդանբաշի տիտղոսն է տրված։ Այս գիւղը յանձնված է Աղա-բէգ անունով թուրքի հսկողութեան։ Բայց ինչ հսկողութիւն կարելի է սպասել այդ Աղա-բէգից, մինչդեռ ինքն ևս ոչ պակաս աւազակ է։ Կարճեանցիները Աղա-բէգի եղբօրը տեսել ու ճանաչել էին աւազակների մէջ։ Ցիսունի չափ տուն ունեցող և առանց ուշադրութեան թողնված Կարճեանը դեռ նոր է սկսել պահապաններ դնել ճանապարհների անցքերում»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Երևանցի յայտնի վաճառական Տիգրան Ավիրիկեանց արդէն անցեալ տարվանից մտադրվել էր իր հայրենի գիւղում՝ Կարփիում, իր ծախսով եկեղեցական-ծխական ուսումնարան շինել։ Այս տարի Կաթողիկոսից օրհնութեան կոնդակով իրաւունք ստանալով, մայիս ամսվանից սկսել է կանոնաւոր ձևով ուսումնարանի շինութիւնը և յոյս կայ, որ եկող սեպտեմբերին պատրաստ կը լինի։ Ուսումնարանի պահպանութեան համար խոստացել է իբրաքանչիւր տարի վճարել վեց հարիւր բուբլի։ Շնորհաւորում ենք պարոնի այդ համակրելի գործը»։

—

ԿԱՐՍԻՑ ստացանք հետևեալ նկատողութիւնը տպագրելու համար. «Դեռ ևս ապրիլ ամսին լրագիրներում կարդացինք, որ դուրս է եկել մամուլի տակից «Արաքս» պատկերազարդ հանդիսի 1893 թ-ի երկրորդ գիրքը։ Չը նայելով որ այդ ժամանակից անցել է երեք ամիս, բաժանորդներից ոչ ոք չէ ստացել դեռ ևս այդ գիրքը։ Հրատարակիչ Գուլամիրեան ոչ մի բացատրութիւն չէ տալիս այդ մասին։ Բաժանորդագրվել ցանկացողները այդ անկանոնութիւնից դժգոհ լինելով՝ չեն կամենում գրվել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԱՐԽԻՍՏՆԵՐԻ ԴԷՄ ԲԻԼ

—

Վաշինգտոնի սենատը այս օրերս մի բիլլ ընդունեց անարխիստների դէմ, որի բովանդակութիւնը կարճառօտ կերպով հետևեալն է։ Ոչ մէկ անարխիստ չէ կարող ապ իջնել Միացեալ-Նահանգների նաւահանգիստներում։ Իսկ մնացած բոլոր քաղաքական փախստականները, որոնք չեն պատկանում անարխիական կուսակցութեանը, պէտք է առաջվան պէս անձեռնմխելի մնան։

Միացեալ-Նահանգները դաղթող իբրաքանչիւր անձն, նախ քան աքսորվի, պէտք է պատշաճաւոր քննութեամբ ապացուցվի, թէ արդեօք նա անարխիական կուսակցութեանը պատկանում է, թէ ոչ։ Իբրաքանչիւր անարխիստ, որ աքսորված է եղել երկրից և կրկին վերադառնում է այնտեղ, 4 տարվայ բանտարկութեանն է դատապարտվում։ Այն նաւահանգիստներում, որտեղերից ուղևորվում են էմիգրանտները, պէտք է ներկայ լինեն ամէրիկական տեսուչներ, որոնք պէտք է վճռեն, թէ արդեօք կարելի է դաղթականին բաց թողնել, թէ ոչ։ Սակայն այդ բանը պատասխանատուութիւնից չէ ազատում և շոգենաւային ընկերութիւններին։ Այդ ձևով խմբագրված բիլլը յանձնված է պատգամաւորների ժողովին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Journal des Debats» լրագիրն ասում է, որ եւրոպացիները պէտք է պատրաստվին անխնայ պատերազմին։ Չինացիները գերի չեն տանում, այլ ուղղակի գլխատում են թշնամուն, որովհետև պրէմիա են ստանում թշնամու իրաքանչիւր գլխի համար։ Ֆորմոզում, օրինակ, նրանք այնտեղ էին հասնում, որ փորում էին գերեզմանները և գլխատում էին մեռելներին՝ խոստացած պրէմիան ստանալու համար։

—Անգլիական լրագիրները հաղորդում են, որ հրատարակվել է անգլիական թագուհու շրջաբերականը, որով թագուհին պատիրում է իր հպատակներին ամենախիստ չէզոքութիւն պահպանել, արգելում է նրանց ծառայութեան մտնել պատերազմող կողմերի մօտ, նոյնպէս հրամանագրում է, որ թէ Եապոնիայի և թէ Չինաստանի բոլոր պատերազմական նաւերը, որոնք կանգնած են բրիտանական նաւահանգիստներում, անյապաղ չտապեն թողնել բրիտանական ջրերը։

—Շանղհայից «Daily News» լրագրին հեռագրում են, որ չինական արտաքին գործերի մինիստրութիւնը մի շրջաբերական հրատարակեց, որով խոստանում է իր հովանաւորութիւնը բոլոր օտարազգիներին, որոնք կը մնան իրանց տեղերում, Չինաստանում։ Սակայն այդ շրջաբերականը չը համոզեց եապոնացիներին, որոնք ահագին խմբերով հեռանում են Չինաստանից։ Եապոնիայի և Չինաստանի մէջ պօստային հաղորդակցութիւնը ընդհատված է։

—Չինաստանում պատերազմական տրամադրութիւնը սկսում է զօրեղանալ։ Խունան ֆանատիկոս նահանգից ահագին թւով կամաւորներ են գալիս։ Զօրքեր են գնում Մանչուրիայից դէպի Կորէյա։ Չինական զօրքերին արդէն սկսել է ուտելեղէնների պաչարը պակասել։ Չինական կայսրը ամբողջ նահանգը զինուորական հարկի է ենթարկել, և բացի դրանից, ասում են, որ մտադրութիւն ունի արտաքին փոխառութեան դիմել։

—«Temps» լրագիրը գրում է կորէյական գործերի առիթով, որ այն ժամանակ, երբ պատերազմական պատրաստութիւններ են տեսնում Չինաստանում և Եապոնիայում, թշուառ Կորէյան, այդ կռուածաղիկը, սարսափով է սպասում ցրտերի մօտենալուն. այժմ արդէն Կորէյի ազգաբնակութիւնը սաստիկ աղքատութեան մէջ է, և կորէյական ու չինական կառավարութիւնները աշխատում են ալիւրի պաչար ձեռք բերել Նիւ-Յորկում, Չիկագօում և Մինէապոլիսում։ Բացի դրանից, ուրիշ տեղերից ևս նուիրատուութիւններ են լինում։ Ամէրիկական մէկ լրագիր իր հաշվով հաղար տակառ ցորեն է ուղարկել Կորէյա։

այդ մարդիկը առաջինը չեն սկսի իրանց կոտորել։ Պատերազմի ժամանակ էր, ոչ ոքի չէր կարելի հաւատալ. գայլերին նշանակել էին ոչխարների պահապան. ամեն բոպէ սպասում էին, որ ահա խաժամուժ տաճիկ զօրքը ներս կը խուժէ և բոլորը, այդ սրբազան շինութեան յարկի տակ, կը գտնեն իրանց գերեզմանը։

Դարերի ընթացքում այդ ժողովուրդը կորցրել էր իր հաւատը դէպի Թիւրքի խոստումը կամ ազնիւ խօսքը. նա միշտ խաբվել էր և ներկայ բոպէին էլ չէր կարող հաւատալ մի Էմրուլայի խօսքին. վերջապէս մի աւազակապետ, բաշիբոզուկների առաջնորդ ինչ կարող էր անել կառավարութեան դէմ, ինչպէս նա պէտք է կարողանար արգելել և խանգարել փաշայի հրամանը և կամքը։

Երկիւղի և յուսոյ մէջ դուրս եկաւ եկեղեցին. ամեն մարդ շտապում էր հասնել իր տունը և փակվել չորս պատերի մէջ։

Էմրուլան կատարեց իր խօսքը՝ նա արդեօք դարձաւ փաշայի վճռի իրագործման։

Կիրակի առաւօտը վաղ, իր մարդկանց ուղարկելով եկեղեցու դուռը պաշտպանելու, միմներին հրամայեց ամեն բոպէ պատրաստ լինել հասնելու եկեղեցի և զէնքով դիմադրելու թիւրք ամբոխի մտադրութեան. դրա համար նա խոստացաւ իրաքանչիւրին երկու ոսկի։ Այդ կարգադրութիւնները անելով՝ ինքը դիմեց փաշայի տունը։

Նրան շուտով ներս հրաւիրեցին. փաշան առաւօտեան վաղ անուշ էր անում սուրճ և ծխում էր զալիան։ Տեսնելով Էմրուլային, նա ժպտաց և հրաւիրեց նստելու։

—Ի՞նչ նորութիւն, բէկ, հարցրեց փաշան։

—Նորութիւն չը կայ, տէր. միայն ներեցէք, որ ես այսպէս վաղ համարձակվեցի խանգարել ձեր միայնութիւնը. բայց գործը անյետաձգելի է և դուցէ իմ ուշանալը պատճառ դառնար շատ անմեղների մահվան, ուստի շտապեցի այստեղ վտանգի առաջն առնելու։

—Ի՞նչ վտանգ, սարսափից զունատված բացականչեց փաշան, մի՞թէ արդէն մօսկովը մօտ է, այդ դաւուրը հասել է և այստեղ, ասա, բէկ, շուտով։

—Հանգստացէք, տէր, մօսկովը դեռ չէ հասած մեր սահմանները, բայց շուտով կը հասնի, քանի որ մենք անգործ նստած՝ ոչ մի միջոց ձեռք չենք առել նրանց ճանապարհը կտրելու, այլ միայն նստած սպասում ենք. վտանգը այն վճռեն է, որ երկու օր առաջ դուք տուիք—ուզում էք այսօր կոտորել բոլոր հայերին. խմացէք տէր, դրանով մենք աւելի կը գրգռենք մեր թշնամուն. բացի այդ, կոտորելով հայերին, մեր զօրքը զրկվում է կերակրողի ձեռքից. դուք ինքներդ շատ լաւ գիտէք, որ եթէ տեղական հայերը չը լինէին, վաղուց մեր զօրքը քաղցից կոտորված էր։ Նրանք են, որ ամեն տեսակ ուտելիք են մատակարարում զօրքին, առանց վարձ ստանալու. մենք նրանց միայն խոստմունքով ենք վճարում. ինչ կը լինի մեր վիճակը, երբ կոտորենք նրանց և մենք էլ քաղցած կոտորվենք. դրանից ինչ շահ մեզ և մեր տարաբաղդ հայրենիքին...

—Բայց չէ՞ որ նրանք լրտեսներ են, տաքացած բացականչեց փաշան, նրանք մեր բոլոր գաղտնիքը յայտնում են մօսկովներին. պէտք է վերջ տալ բոլորին։ Ո՛չ, ես վճռել եմ և համաձայնվել չնչելու այդ անպիտան հայերին, որոնք մեր բոլոր անբաղդութեան և անաջողութեան պատճառն դարձած... Իզուր, բէկ, դու այդպիսի մի խնդիրքով դիմել ես ինձ. դու գիտես, որ վճիռս անդառնալի է։

Էմրուլայի աչքերը փայլեցին կատաղութեամբ։

—Ուրեմն, տէր, զսպած բարկութեամբ հարցրեց Էմրուլան, ձեր վճռութիւնը չի բարեհաճի քանդելու տուած վճիռը, որ այնքան վտանգաւոր է։ Մենք անզօր լինելով արտաքին թշնամուն դիմադրելու, ստեղծում ենք մեզ համար և ներքին թշնամի։ Ո՛չ, տէր, ես դրան հակառակ եմ, ոչ իմ ձեռքը և ոչ իմ խումբը չի մասնակցի այդ գործին։

—Ես երդուել եմ, շարունակեց Էմրուլան աւելի բարկացած ձայնով, արդեօք դառնալ այդ վճռի իրագործման իմ խմբով, և գիտէք, տէր, իմ խօսքն էլ անդառնալի է։

—Ի՞նչպէս... կատաղած բղաւեց փաշան, դու համարձակվում ես խոչնդոտ դառնալ իմ հրամանին... դաւաճան իսլամ... քեզ այս բոպէիս հրապարակում ձողի կը հանեմ և մարմնդ գիշատիչ թռչունների կերակուր կը շինեմ...

—Եթէ այդպէս է, եթէ հայերին դուք կարծում էք ձեր թշնամի, որ միմիայն ձեր երեակայութեան արդասիքն է, այս բոպէիս ինձ և իմ խմբիս էլ ընդունեցէք իսկական թշնամիներ. ես չը պէտք է թողնեմ, որ անմեղ հայերի արիւնը թափվի. սա իմ վերջին խօսքն է, լաւ մտածեցէք. առ այժմ ցտեսութիւն։

Եւ Էմրուլան հպարտ կերպով դուրս եկաւ՝ ձեռքը դրած իր սրին։

—

Էմրուլայի հեռանալուց յետոյ փաշան խորհրդակցութեան հրաւիրեց իր մտերիմներին և մոլլաներին։ Ինչ խօսեցին, այդ յայտնի չէ, միայն թէ տեղական թիւրքերի, մոլլաների և զօրքի փափաքը՝ լուանալ իրանց ձեռքերը հայոց արիւնով՝ օրը ցնդվեց։

Այդ օրից Էմրուլան ոչ մի տեսակցութիւն չունեցաւ փաշայի հետ. նրանց մէջ ամեն յարաբերութիւն կտրված էր։

Բայց այդ դրութիւնը երկար չը տևեց. 1877 թ. յունիսի 16-ին ռուսաց յաղթական զօրքը, Կոմարովի առաջնորդութեամբ, դրաւեց Արդանուչը. փաշան հազիւ հազ կարողացաւ ազատվել փախչելով. տեղական հայերը ընդ միշտ ազատվեցին տաճկական լծից։

Իսկ Էմրուլան իր մարդկանցով հեռացաւ Շաւշէթի գաւառը և սկսեց պարապել իր հին արհեստով—աւազակութեամբ։ Մի քանի տարի շարունակ նա սարսափ էր տարածում շրջակայ գիւղերի բնակիչների վրա ու մեծ հոգս պատճառում կառավարութեան։

Շատ չանցած՝ նա բռնվեց և իր վերջին օրերը անցկացրեց Քութայիսի բանտում, սրտեղ և մեռաւ։

Ա—ցի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք հետևեալ «Բաց նամակը»

«Տասն տարի կը լինի, որ ես կարդում եմ «Արձագանքը», սակայն իւրաքանչիւր համարը կարդալու համար գործ եմ դնում ամենաշատը 2 րոպէ։ Վերցնում եմ համարը, նայում եմ յօդուածի ընկզրին, և արդէն հոտից գիտեմ, թէ ինչ կը լինի մէջը։ Ամէն մի տողից, ամէն մի յօդուածից բուրում է փթած դիակի հոտ, և ես ստիպված եմ չուտով համարը վայր դնել, լաւ իմանալով որ այսօր էլ կրկնված է նոյն երգը, ինչ երէկ էր, այսօր էլ նոյն սուտը, ինչ անցեալ օրն էր, և վաղն էլ կը լինի նոյնը, ինչ այսօր է։

Բայց մի գրուածք այս օրերս գրաւեց իմ ուշադրութիւնը, այն է «Մի օրվայ հանգստութիւն» յօդուածը (№№ 89 և 90)։ «Արձագանքի» մէջ ամէն տեսակ բան տպվել է, բայց այդպիսի բան՝—երբէք։

«Записки Сумасшедшаго»—ահա այդ գրուածքի իսկական անունը։

Երդվում եմ ինչով կամենաք, այդպիսի յօդուածներ ես պատրաստ եմ ամէն օր կարդալ. դրանից աւելի մեծ զուարճութիւն, ես երևակայել չեմ կարող։

Խորհուրդ եմ տալիս մեր բոլոր բժիշկ-պսիխիատրներին կարդալ «Արձագանքի» «Записки Сумасшедшаго».—հոգեբոյժի համար այդտեղ ուսումնասիրութեան մեծ նիւթ կայ։

Ընթերցող

* * *

Վիէննայի բժշկական շրջաններում արդէն պատրաստութիւններ են տեսնում ընդունելու բժիշկների կոնգրէսի համար, որ գումարվելու է Վիէննայում սեպտեմբերի երկրորդ կիսում։ Սպասում են, որ կոնգրէսը շատ բազմամարդ կը լինի, որովհետև վերջին կոնգրէսներին, մասնաւոր Նիւրէնբէրգում, մասնակցողների և նրանց տիկիններին թիւը անցնում էր 3000-ից։ Վիէննայի կոնգրէսին մասնակցողների թիւը երևի աւելի շատ կը լինի։ Բժշկականութեան և բնագիտութեան աստղերից կոնգրէսին կը մասնակցեն՝ Վիրխով, Կոխ, Հէկէլ, քիմիկոս Վիկտոր Մայէր, մաթեմատիկոսներ Ֆուկս և Կէնիգսբէրգէր և շատ ուրիշներ։ Խոստացված բէֆէրատների թւում գրանվում է և Հէլմհոլցի բէֆէրատը, բայց հոչակաւոր գիտնականը, որպէս յայտնի է, դեռ ևս չէ կազդուրվել ջղային հարուածից և հազիւ թէ կարող կը լինի մասնակցել կոնգրէսին։

* * *

Աթէնքում այս օրերս վախճանվեց 80 տարեկան հասակում յունաց յայտնի հրապարակախօս Ստեֆան Կոէնոս։ Կոէնոս առաջ հրատարակում էր «Anatolikos Astyr» Լօնդոնում և անգին կարողութիւն ունէր։ Նրա գրականական և քաղաքական գործունէութիւնը շատ նպաստեց Օտտոն թագաւորի գահընկէցութեանը։ Նրա «Հերոս» վէպը հիացնում էր երկու ամբողջ սերունդ և մինչև այժմս էլ յունաց հասարակութեան սիրած գիրքն է մնում։ Կոէնոս կատարեալ աղքատութեան մէջ մեռաւ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 8 օգոստոսի։ Անգլիական կառավարութիւնը արդէլք դրեց մի քանի նաւերի վրա, որոնք վարձված էին անգլիական նաւահանգիստներում Զինաստանի պատերազմական նպատակների համար։ Եապոնիան 50 միլիոն դոլլարի ներքին փոխառութիւն արաւ պատերազմական հարկաւորութիւնների համար։ Փոխառութեան ստորագրութիւնը շատ աջող է գնում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի։ Նոցա Կայսերական Մեծութիւնները Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի հետ երէկ վերադարձան Կրասնօյէ-Սելօից Պետերհօֆ։—Օգոստոսի 4-ին հասան «Բօբր» զրահակիր նաւակը Չէմուլպօ և օգոստոսի 6-ին «Կօրէյցի» զրահակիր նաւակը՝ Զիֆու։—«Юридическая Газета» լրագիրը թոյլատրված է հրատարակել, առանց նախնական ցենզուրայի։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ, 9 օգոստոսի։ Կիրակի ժամանեց ֆրանսիական ծովապետ Դիւպիւի «Bayard» զրահակիր նաւով։ Քաղաքային պատգամաւորութիւնը աղ ու հաց մատուցեց ծովապետին. ծովային ժողովարանում տեղի ունեցաւ հանդիսաւոր ընտանեկան երեկոյ։ Վլադիվոստոկի քաղաքացիները ի պատիւ ֆրանսիական ծովաղնացների պիկնիկ կազմեցին Նադէժդինսկայա երկաթուղիական կայարանում։

ԼՕՆԴՕՆ, 9 օգոստոսի։ Զինաստանի անգլիական դեսպանը օգոստոսի 18-ին հասաւ Տիանցզին. երկարատև խօսակցութիւն ունեցաւ Եախունգ-Զանգ փոխարքայի հետ, խօսեց նոյնպէս ռուսաց դեսպանի հետ, որի հետ օգոստոսի 19-ին պէտք է ճանապարհ ընկնէր Զիֆու, ուր գտնվում է անգլիական նաւատորմը։

ՉԻԿԱԳՕ, 9 օգոստոսի։ Տեղական ոստիկանութիւնը յարքունիս գրաւեց մի քանի դժոխային մեքենաներ և կալանաւորեց մի քանի կասկածելի անձանց. ուրիշ դրանց նման անձինք իրանց կամքով հեռանում են Չիկագոյից։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 9-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	93 ր.	10 կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	45 ր.	60 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	69 »	62½ »
Ոսկի — — արժէ . .	7 »	47 »
Մաքսային կուպոններ — . .	149 »	50 »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	5 »	7 »
Պետ. բանկի 5% տոմս 1 տրջանի .	— »	— »
— — — — 2-րդ .	— »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
5% ոսկեայ ընկնտա 1884 թ. . . .	159 »	— »
4½ ոսկեայ փոխառութիւն. . . .	148 »	75 »
Արևելեան 5% փոխառ. 1-ին տրջ.	239 »	50 »
— — — 2-րդ —	228 »	— »
— — — 3-րդ —	— »	— »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	— »	— »
— — երկրորդ —	— »	— »
Պետական երկաթուղային ընկնտա.	102 »	— »
4½ ընկնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	95⅝ »	— »
5% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	— »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. դրաւ. թղթ. — — .	— »	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	94 »	— »
4½% գրաւական թղթեր կալուած.		
Պեփոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	152 »	— »
— — — թղթադ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	100⅞ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100⅞ »	— »
Օդեսայի — —	101 »	— »
Թիֆլիսի — —	— »	— »
Դրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	— »	— »
— — Քութայիսի — .	— »	— »

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. ԱԻԵՏԻՔ ԿՈՑԼԱԻԻ

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԳԻՐՔԸ

1667 էջ. գինը 10 ր.

Ծախվում է 5 ռուբլիով, Խուդավերդեանի մագազինում, Գոլովինսկի պրոսպեկտի վրա։

(№ 91) 1—10

"ԱՐԱՔՍԻ" ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

"Արաքս" հանդիսի 1894 թ. բաժանորդագրութիւնը շարունակվում է։ Առաջին գիրքը, որ մամուլի տակ է, կը հրատարակվի ըստ կարելւոյն շուտով։ Երկրորդը լոյս կը տեսնի դեկտեմբերին։ "Արաքսին" ստորագրվողներից մասնաւորապէս խնդրում ենք ի շահ հրատարակութեան բաժանորդագրվել փութով մինչև գրքի լոյս տեսնելը։ Առաջին գրքի մէջ ընթերցողը կը գտնէ և մի այլ նորութիւն, որ մտցնում ենք առաջին անգամ։

"Արաքսի" բաժանորդագինն է 3 ռուբլի։

Մեր հրատարակութեամբ շուտով լոյս կընծայուի «ԿԻԼԻԿԻԱ» վերնագրով ընտիր և ճոխ մի հրատարակութիւն, մօտաւորապէս 400 երեսից։ Թէ բնագիրը և թէ նկարները, թւով քառասուն, տպագրվում են կապոյտ գոյնով։

«Կիլիկիա»-ի գինն է անկազմ 1 ր. 25 կ. ոսկէ կազմով 1—85 կ. «Արաքս»-ի 1891 թ. բաժանորդաց համար 40 կ., իսկ ոսկէ կազմով 1 ռուբլի։ Նոյնպէս աշնան վերջերին հրատարակվելիք պատկերազարդ «Ս. Էջմիածին» գրքի գինն է 1 ռ. 40 կ., իսկ ոսկէ կազմով 2 ռուբլի։ «Արաքսի» 1894 թ. բաժանորդաց համար անկազմ 60 կ., կազմով 1 ռուբլի։

Դիմել. С. Петербургъ. Симеону Гуламирянцу.

1—1

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ ունի քաղաքային դպրոցի արտօնութիւն, ցանկանում է ծառայել Հայոց դպրոցներում։ Կարող է վերցնել դասեր ռուսերէնից և միւս առարկաներից՝ բացի հայերէնից։

Հասցէն՝ Тифлисъ, Ртыщевская, № 23.

(№ 86) 2—3

Ցխինվալի հայոց Բարեգործական ընկերութեան տեղական վարչութիւնը յայտնում է հետևեալը։ Սոյն օգոստոսի 14-ից կը սկսվի ծախվել վարչութեանս պատկանեալ, աշակերտուհիների պատրաստած հազարի չափ ձեռագործներ և զանազան իրեղէններ ամենաչափաւոր գնով։ Բացի սրանից սոյն օգոստոսի 21-ին հրապարակական աճուրդով կապալով է տրվում Ցխինվալի հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանի շինութիւնը, երեք հազար րուբլու արժողութեամբ. ցանկացողները կարող են մասնակցել։

Նախագահ վարչութեան՝ Յովհաննէս Տէր-Ստեփանեանց

1—2 (№ 91) Քարտուղար՝ Սահակ քահանայ Խաչատրեանց

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

„ՐՕՍՍԻԱ"

Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՐՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Օրինակ։ Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրում է 5,000 ր., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյապաղ մահից յետոյ։ Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսեան պրէմիա 30 ր. 80 կոպէկ։

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 ր. գումարների մէկ անձի կեանքի համար։

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաններով և արտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում։

Ապահովագրական գումարը տրվում է և մահվան դէպքում տարափոխիկ հիւանդութիւնից, խոլերայից և այլն։

Յունվարի 1-ին 1894 թվի «Ռոսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի դրամագլխի։

Ապահովագրողները մասն ունեն Ընկերութեան եկամուտներից։

Ապահովագրողների դիվիդէնտը 1893 թվի համար—12% է։

Ապահովագրութեան համար այտարարութիւնները ընդունվում են և ամէն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сергіевская, д. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում։

(№ 85) 3—15

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Յ. ԴԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

II-րդ տարի.

Օգոստոսի 22-ից աշակերտներ ընդունվում են՝ գիշերօթիկ, ցերեկօթիկ և երթևեկ, պատրաստվելու պետական բոլոր դպրոցները մտնելու համար։

Անհրաժեշտ տեղեկութիւնները և ծրագիրը կարելի է ստանալ ամէն օր առաւօտեան 8 ժամից մինչև 1 ժամը, իսկ երեկոյեան 5—8 ժամը։ Հասցէն՝ Тифлисъ, въ Сололакахъ, Садовая улица, д. Шадинова, № 38, противъ Гановской.

(№ 89) 2—5 (6, 11, 13, 17, 27)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մ. ԴԷ-ԼԱ-ՖԱՐ ԵՒ ԸՆԿ.

կատարում է հետևեալ օպէրացիաները.

1) Տոկոսաբեր թղթերի ապահովութեամբ՝ փոխառութիւն.

2) I, II, III խաղարկութեան տոմակների վաճառումը, ԱՄՍԱԿԱՆ 5 ՐՈՒԲԼԻ ՎՃԱՐՈՒՄՈՎ.

3) Փոխանակագրեր է տալիս Ռուսաստանի զանազան քաղաքների վրա.

4) Ընդունում է ժամանակաւոր և մշտական աւանդներ.

5) Բաց է անում ընթացիկ հաշիւներ՝ չէկերով.

6) Ընդունում է in casso վէկսելներ և ուրիշ դոկումէնտներ։

Լիազօր՝ Ս. Պ. ՊԱՎԼՕՎ ԹԻՖԼԻՍ, Սերգիեվսկայա փողոց, № 1.

Գանձակում գործակալն է՝ Նիկոլայ Կարամանովիչ Օհանէսով։

(№ 15) (Հ.) 27—50

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը ձեռնարկելով բանալու Թիֆլիսում ընկերութեան

ԿԵՆԴՐՕՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ—ԸՆԹԵՐՑԱՐԱՆ,

որի մէջ պէտք է մտնեն բոլոր լոյս տեսած հայերէն գրքերը և լրագիրները, նոյնպէս և ուրիշ լեզուներով տպագրված ընտիր երկասիրութիւններ՝ կովկասագիտութեան և արևելագիտութեան վերաբերեալ, սրանով դիմում է այն անձանց, որոնք կը ցանկանային իրանց մատենադարանները նուիրել կամ վաճառել ընկերութեան՝ բարեհաճեն գրքերի ցուցակները և իրանց պայմաններն ուղարկել ընկերութեան խորհրդին մինչև օգոստոսի 30-ը։

(№ 89) 3—5

Дозволено цензурою, Тифлисъ, 10 Августа 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 128.